ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստան

Սեպտեմբեր, 2023 թ.

ՄԱԿ ՓԳՀ-ն կառավարության գործընկերների հետ սերտորեն աշխատում է ապաստանի ազգային ընթացակարգերի բարելավման եւ տեղական կարողությունների ձեւավորման ուղղությամբ՝ բռնի տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար Հայաստանում պաշտպանության բարենպաստ միջավայր ապահովելու նպատակով:

2023 թ. վերջին տարածաշրջանում ռազմական գործողությունների վերստին սրացումից հետո ՄԱԿ ՓԳՀ թիմերը գտնվում են տեղերում՝ արձագանքելու Հայաստան եկած 100,000-ից ավելի փախստականների առավել հրատապ կարիքներին, տրամադրելու անմիջական աջակցություն՝ միաժամանակ իրականացնելով իրավիճակի հանգամանալից մշտադիտարկում:

ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունն առաջնորդում է Փախստականների կարիքներին արձագանքման ծրագրի (ՓԿԱԾ) պատրաստման աշխատանքները՝ նպաստելու Հայաստանի կառավարության արագ արձագանքման գործողություններին:

ՄԱԿ ՓԳՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(առ 2023 թ. հունիս)*

Փախստականներ**	34,768
Ապաստան հայցողներ	655
Քաղաքացիություն չունեցող անձինք	531

Ծագման երեք խոշորագույն երկրները





** ՄԱԿ ՓԳՀ 2023 թ. միջնամյա միտումներ տվյալների որոնման հարթակ եւ ՀՀ կառավարություն*

*** 2023 թ. սեպտեմբերի վերջին ռազմական գործողությունների վերստին սրացման հետեւանքով հոկտեմբերի 3-ի դրությամբ Հայաստան է ժամանել 100,514 փախստական:*

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԻՑ

GLOBAL REFUGEE FORUM | UNHCR

Հայաստանը 7 պարտավորություն է հանձնառել

2019 թվականից ի վեր՝ պաշտպանության կարողությունների, ապաքաղաքացիության եւ լուծումների վերաբերյալ:

Ապաքաղաքացիության խնդրի լուծման քայլեր

Ապաքաղաքացիության հասցեագրման հանձնառության շրջանակում Հայաստանը 2021-ին փոփոխություններ եւ լրացումներ է կատարել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է աջակցել այս ոլորտում կառավարության գործադրած ջանքերին՝ բոլորովին վերջերս կազմակերպելով Ապաքաղաքացիության հարցերով աշխատանքային խմբի հանդիպում:

ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐ

Գործընկերություն պետական կառույցների հետ

Նորաստեղծ Ներքին գործերի նախարարությանը եւ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանն (ՄՔԾ) օժանդակելու նպատակով 2023 թ. հունվարից ի վեր ՄԱԿ ՓԳՀ-ն ապաստանի եւ ապաքաղաքացիության թեմաներով ՄՔԾ աշխատակիցների վերապատրաստման ծրագիր է մշակել: Այս աշխատանքներն իրականացվել են ԵՄ-ի կողմից համաֆինանսավորվող «Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում՝ հաջակցություն Կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգին» ծրագրի շրջանակում ՄՄԿ-ի հետ սերտ համագործակցությամբ: ՄԱԿ ՓԳՀ-ն ձեռնամուխ է եղել ներկա արտակարգ իրավիճակում ՀՀ կառավարության ձեռնարկած արձագանքման գործողությունների սատարմանը:

Երեխայի պաշտպանության ծառայությունների հասանելիություն

ՄԱԿ ՓԳՀ-ն գործընկեր Կանանց ռեսուրսային կենտրոնի միջոցով 2023-ի սկզբից մինչ օրս ԳՀԲ 31 զոհի ծառայություններ է մատուցել: ՄԱԿ ՓԳՀ-ն գործընկեր Հայկական Կարմիր խաչի ընկերության միջոցով 92 երեխայի դեպքերի վարման աջակցություն է տրամադրել եւ իրազեկվածության բարձրացման մեկ դասընթաց՝ երեխաների պաշտպանության ծառայություն մատուցողների համար: Վերջին արտակարգ դեպքերի առնչությամբ ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնել է պաշտպանության մշտադիտարկման, տեղեկությունների տրամադրման եւ մասնագիտացված ծառայություններ ուղղորդման աշխատանքները:

Բազմանպատակ դրամական աջակցություն (ԲՆԴԱ)

Օգոստոսին ՄԱԿ ՓԳՀ-ն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով ԲՆԴԱ է տրամադրել 175 փախստականի եւ ապաստան հայցողի (2023 թ. հունվարից առ այսօր՝ 480 մարդ)՝ օգնելով նրանց բավարարել հիմնական կարիքները:

ՄԱԿ ՓԳՀ-ն հավելյալ օժանդակություն է հայցում՝ դրամական աջակցության կարիք ունեցող ավելի շատ մարդու կարիքների հասցեագրման նպատակով: ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնում է այս եւ մի շարք այլ ծառայություններ՝ ուղղված առկա եւ նորահայտ կարիքների բավարարմանը տարածաշրջանում:

Առանցքային գերակայություններ

Ապաստանի ընթացակարգեր.

- ՄԱԿ ՓԳՀ-ն սերտորեն համագործակցում է կառավարության համապատասխան գործընկերների հետ՝ ապաստանի ազգային ընթացակարգերի բարելավման եւ բռնի տեղահանված ու քաղաքացիություն չունեցող անձանց համար Հայաստանում պաշտպանության բարենպաստ միջավայր ապահովելու ուղղությամբ:
- ՄԱԿ ՓԳՀ-ն սերտորեն աշխատում է Փաստաբանների պալատի հետ՝ աջակցելու Հանրային պաշտպանի գրասենյակին (ՀՊԳ), որպեսզի վերջինս որակյալ իրավական օգնություն տրամադրի միջազգային պաշտպանության կարիք ունեցող մարդկանց՝ տեխնիկական օժանդակության, թարգմանչական ծառայությունների եւ նպատակային փորձագիտական աջակցության միջոցով:
- 2023 թ. սեպտեմբերի վերջին վերստին սրված ռազմական գործողությունների հետեւանքով Հայաստանի սահմանը հատեց շուրջ 100,514 փախստական: ՄԱԿ ՓԳՀ-ն տեղում հրատապ աջակցություն է տրամադրում՝ ի լրումն Կառավարության առաջնորդությամբ արագ արձագանքման գործողությունների, որոնք ուղղված են նոր եկող, այդ թվում խոցելի եւ հատուկ կարիքներով փախստականների պաշտպանության անհետաձգելի կարիքների բավարարմանը: ՄԱԿ ՓԳՀ-ն կառավարման մարմիններին առաջին անհրաժեշտության ապրանքներ (ԱԱՊ), ներառյալ՝ մահճակալներ, ներքնակներ, անկողնային հավաքածուներ եւ հիգիենայի պարագաներ, նյութատեխնիկական օժանդակություն է տրամադրում՝ հաշվառման գործընթացների եւ արձագանքման նպատակով:

Կարողությունների ձեւավորում

- ՄԱԿ ՓԳՀ-ն շարունակում է ներդրումներ կատարել տեղական եւ համապետական դերակատարների կարողությունների ձեւավորման եւ վերապատրաստման ուղղությամբ: Հունիս եւ օգոստոս ամիսներին ՄԱԿ ՓԳՀ-ն Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի եւ Հայաստանի Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) հետ համագործակցությամբ 45 սահմանապահի համար փախստականների պաշտպանության ստանդարտների եւ ընթացակարգերի վերաբերյալ դասընթացներ կազմակերպեց, որից մեկը՝ նորավարտ սահմանապահների, երկուսը՝ սկսնակների համար:

Համայնքի իրավազորում եւ դիմակայունություն

- Օգոստոսին ՄԱԿ ՓԳՀ-ն համայնքային խորհրդակցություններ կազմակերպեց Իրանից, Իրաքից, Սիրիայից, Եգիպտոսից, Կոնգոյից, Սիերա Լեոնեից, Հայիթիից, Ուկրաինայից բռնի տեղահանված մարդկանց հետ, որոնց թվում էին նաեւ խոցելի կանայք, երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք եւ տարեցներ: Նրանց հիմնական խնդիրներն են բնակապահովումը, կենսապահովման հնարավորությունները եւ առաջնային ծառայությունների հասանելիությունը, որոնք կքննարկվեն պլանավորման առաջիկա գործընթացներում:

Սոցիալական համախմբման խթանում

- ՄԱԿ ՓԳՀ-ն շահերի պաշտպանության միջոցառումներ եւ աշխատանքներ է իրականացնում, որոնք միտված են հյուրընկալող համայնքների հետ խաղաղ համակեցության ապահովմանը:

Աշխատանք գործընկերների հետ

- ՄԱԿ ՓԳՀ-ն սերտորեն աշխատում է, ի թիվս այլոց, ՀՀ արտաքին գործերի, Ներքին գործերի, Արդարադատության, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների հետ:
- ՀՀ կառավարությանն աջակցելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն առաջնորդում է փախստականներին ուղղված Միջգործակալական արձագանքման ծրագիրը՝ ՓՀՄ-ին համահունչ եւ ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի (ՄՀԳ) օժանդակությամբ:
- ՄԱԿ ՓԳՀ-ն ընդլայնել է գործընկերների իր շրջանակը՝ թափ հաղորդելու գործառնական կարողություններին Երեւանում, Շիրակի, Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում: ՍՄԱԿ ՓԳՀ-ն գործընկերային համաձայնություններ ունի «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի, Հայկական Կարմիր խաչի ընկերության, ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի, Հայաստանի փաստաբանների պալատի հետ:
- ՄԱԿ ՓԳՀ-ն փոխըմբռնման հուշագիր է կնքել Կանանց աջակցման կենտրոնի հետ՝ գենդերահեն բռնության կանխարգելման, գործերի վարման եւ այլ աջակցության հարցերով խորհրդատվություն մատուցելու մասին:
- ՄԱԿ ՓԳՀ-ն բռնի տեղահանվածներին տրամադրվող օժանդակությունը համակարգում է 40 ՀԿ-ների հետ, այդ թվում Վորլդ Վիժընի, «Գործողություն սովի դեմ», «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունների, Հայկական Կարիտասի, ԳՄՀԸ-ի, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի, «ԱԲԹԵԴ Հայաստան», «Դիմոքրասի Ինթերնեյշնլ» ծրագրերի եւ այլոց հետ:

Ապաքաղաքացիություն

- Հայաստանը միացել է 1954 եւ 1961 թվականների Ապաքաղաքացիության մասին կոնվենցիաներին: Այնուամենայնիվ, դեռեւս որեւէ օրենք չի գործում, որը հստակորեն կսահմանի ապաքաղաքացիության որոշման կարգը: Ներկայում ՄՔԾ-ն «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի եւ ՄԱԿ ՓԳՀ-ի համագործակցությամբ քաղաքացիություն չունեցող անձանց մասին օրենքի նախագիծն է մշակում:
- 2023 թ. հուլիսին ՄԱԿ ՓԳՀ-ն աջակցեց «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի փորձագետների թիմին՝ մասնակցել Վրաստանի ճանաչողական այցին, որի նպատակն էր ծանոթանալ ապաքաղաքացիության որոշման ընթացակարգերի լավագույն փորձին:

ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայությունը Հայաստանում

Անձնակազմ	Գրասենյակներ
32 տեղացի աշխատակից	1 գրասենյակ Երեւանում
3 միջազգային աշխատակից	1 գրասենյակ Գորիսում
7 արտակարգ իրավիճակների հարցերով աշխատակից	

Ֆինանսական տեղեկություններ
(առ 2023 թ. սեպտեմբեր)

Ֆինանսական պահանջներ
12.8 մլն



ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է գլխավոր նվիրատու պետական կառույցներին, որոնք առանց նախապայմանների, ճկուն նախապայմաններով ֆինանսական միջոցներ են հատկացրել:

Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է նաեւ մասնավոր հատվածի եւ անհատների մեծահոգի նվիրատվությունների համար: